

ՁԵՐԻՆԻՆԻՆ 7 ՕԳՈՍՏՈՍԻ 1853

ՄՕՏԱՆՈՐ ԼՈՒԾՈՒՄՆ

ՎԻՃԻՆ

Լեւոն Ի Քէ Բարձրագոյն Դրան և Ռուսաց

Կառավարութեան :

Չարեքաբթի օրուան շոգեհաւով Կոստանդնուպոլսէն հասած լուրերը խիստ կարեւոր են . քանզի մեծ յոյս կու տան թէ մօտեքս բարեկամօրէն և պատուաւոր կերպիւ վախճան մը պիտի ընդունի Բարձրագոյն Դրան և Ռուսիոյ մէջ պատահած վէճը : Ահաւասիկ այս լուրերը՝ զորս կ'օրինակեմք յոռոտալ քը Բոնաֆանիի լրագրէն :

« Լեւոնալ ամսոյ 29ին առաւօտուն Գաղղիոյ դեսպան վանմախալ մօսիւ տը Լաբուրը արտաքայ կարգի սուրհանդակաւ մը ընկալաւ իւր կառավարութենէն պաշտօնական նամակներ և Լաբուրիութիւն մը , զոր փարիզի , Լոնտոնի , Վիեննայի և Պէրլինի դաշինքները մէջերէն մի արանութեամբ կարգադրեր են , պատուաւոր կերպիւ վախճան մը տալու համար օսմանեան կառավարութեան և Ռուսիոյ մէջեղած վիճին :

« Լոյն օրը Լաբուրիոյ դեսպան վանմախալ մօսիւ տը Պրուզը նմանապէս արտաքայ կարգի սուրհանդակաւ մը ընկալաւ իւր կառավարութենէն պաշտօնական նամակներ մի և նոյն մոտք , նոյն Լաբուրիութիւնը բարեկամական կարգադրութեան , և օրինակը ինքնագիր նամակին Լաբուրիութեան առ օգոստոսիա Սուլթանն , որ անցեալ ամսոյ 31ին ընկալաւ անոր սկզբնագիրը , և միանգամայն հեռագրութեան միջոցաւ պաշտօնական նամակ մը ընդունեցաւ : Վիեննայէն օգոստոսի 6 ամսամիտով ըստ նոր տուժարի , որ Վիեննայի վրայ արտաքայ կարգի սուրհանդակաւ հասաւ : Այս նամակը կը ծանուցանէ , թէ օգոստոսիա Նիկիտայոս կայսրը այս վիճին լուծումը կը յանձնէ չորս գլխաւոր տէրութեանցը :

« Մեծին Բրիտանիոյ դեսպան վանմախալ լորտ Սթրէթֆորտ տը Ռէտրիֆը ևս յուլիսի 31ին կէսօրէն ետեւ , ընկալաւ իւր կառավարութենէն անգղիական Գառաֆիս անուն շոգեհաւով , որ Սթրէթֆորտին կու գայ , պաշտօնական նամակներ և մի և նոյն Լաբուրիութիւնը :

« Կլոնն , և բոլոր աշխարհ կը ցանկայ , թէ կարգադրութեան այս Լաբուրիութիւնը համաձայն է Բարձրագոյն Դրան արժանաւորութեանը և անոր վեհապետական իրաւանցը , և թէ Լաբուրիոյ կայսեր ինքնագիր նամակը , որ լեցուն է վեհապետական և համակրական զգացմունքներով օգոստոսիա Սուլթանին համար , ուրիշ նպատակ չունի՝ բայց միայն թախանձել զՍթրէթֆորտին վեհապետութիւնն որ ընդունի զյիշեալ Լաբուրիութիւնը :

« Լեւոնալ շարժումնէ հետեւ այս Լաբուրիութիւնը , որ կ'երկի ծանուցանել մօտաւոր լուծումը վիճին եղելոյ ի մէջ թուրքաստանի և Ռուսաստանի , տեղի տուաւ քանի մը ժողովներու ի մէջ երեսփոխանաց չորս մեծ տէրութեց , նմանապէս ի մէջ այս երեսփոխանաց և արտաքին գործոց տեսուչ բարձրագոյն Ռէտրի փաշային , լիմոյս Կին և 2ին կառավարութեան անդամները գումարուեցան Բարձրագոյն Դուռը նախագահութիւն բարձրագոյն Ռէտրի փաշային , այս Լաբուրիութեան վրայօք որոշում մը ընելու համար :

« Այլ ամսոյս 4ին երեքշաբթի օրը միևնոյն նպատակաւ մեծ ժողով մը պիտի գումարուի Բարձրագոյն Դուռը նախագահութեամբ Ռէտրի փաշային , ուր ներկայ պիտի գտնուին ամէն գործակալները թէ պաշտօն ունեցողները և թէ առանց պաշտօնի եղողները , նմանապէս գործօն և անգործ գլխաւոր պաշտօնակալները :

« Երբեք այսպիսի շարժում մը չէր տեսնուած դեսպանաց խմբին անդամաց մէջ : Վանմախալ մօսիւ տը Պրուզը անցեալ ամսոյ 31ին այցելութեան գնաց Սթրէթֆորտին , արտաքին գործոց պաշտօնէին , ընդհանուր մեծ զօրապետին և տէրութեան բարձրագոյն ժողովոյն նախագահին , այլ ամսոյս 1ին տեսութեան գնաց թընդանօթաձիգ զօրաց տեսուչ բարձրագոյն Վիեննայի Սթրէթֆորտին և կայսերական պահապան զօրաց ընդհանուր հրամանատարին :

« Լոնտոնի 31ին ուրբաթ օրը արտաքին գործոց տեսուչ բարձրագոյն Ռէտրի փաշան վեհապետ Սթրէթֆորտ տը Ռէտրիֆին գլխաց , որուն հետ երկար տեսութիւն ըրաւ :

Բոլորում Ռուսաց կառավարութիւնը կընդունի բարեկամական կարգադրութեան Լաբուրիութիւնը , զոր ըրած են անոր Լաբուրիութեան տէրութիւնները , ուստի յետ սակաւուց պիտի լսեմք թէ անոնց միտքն ինչպիսիք իրաւունքներով մը եղած է , որ խիստ պատուաւոր դաշինքներ պիտի ունենայ թուրքաստանի համար : Բարձրագոյն Դուռը ասկէց աւելի բան մը չէր ուզեր . վանմախալ ընդհանրապէս կըրործուի թէ ի չորհուրէս և ի բարեկամութիւն իւր վեհապետ և հաւատարիմ գաղանկաց , պիտի հաճի ընդունելու անոնց երաշխաւորութեամբ՝ այնպիսի կարգադրութիւն մը որ այս նպատակաւ հաստատուած ըլլայ :

« Լիմոյս 29ին Պէրլինտէն (Սթրէթֆորտ) արտաքայ կարգի սուրհանդակ մը հասնելով ի Կոստանդնուպոլս , պաշտօնական նամակներ բերաւ ծանուցանելով , թէ անգղիական և բարեկարգութիւնը յիշեալ իշխանութեան մէջ կրործեն , թէ բոլոր բնակիչները մեծ ուրախութեամբ կը զինուորին ըստ հրամանի իրենց իշխանին , թէ աւստրիական զօրքը՝ որ գումարուած են Բեդեր վարատին , միայն 20 հազար հոգի կը համարուի , և թէ Վիեննայէն ելած զօրքը որ Սթրէթֆորտին տահմանագրութիւններ պիտի երթային , ետ են դարձեր : Վերոյգրեւորէն յայտնի կը տեսնուի , թէ Սթրէթֆորտին Վեքսմարք իշխանին Պէրլինտէն մեկ նամակ ըրաւ լուրը անհիմն է , զոր Կոստանդնուպոլսյ յուրաքանչեւ լրագրէն օրինակելով զրաւէինք Լաբուրիոյ նախագիր թերթին մէջ :

Կլոնն թէ վանմախալ Շէքիպ էֆէնտին մասնաւոր պաշտօնի մը Պէրլինտէն պիտի յուղարկուի , յիշեալ երկրին վիճակը բնական համար : Յայտնի է որ Բարձրագոյն Դուռը հրաման յուղարկեց անցեալները Վալաքիայի և Սոլտափոյի հաւաքարներուն որ այս իշխանութիւնն ներքէն մեկին , ըստորում Ռուսաց զօրապետ Գորգաքով իշխանին հրամանաւ պարտաւորեցան ընդհատել իրենց յարաբերութիւնները օսմանեան կայսերական կառավարութեան հետ :

Կհատարանէն թէ յիշեալ երկու իշխանները պատասխանեն Բարձրագոյն Դրան , թէ յատուկ այս բանին համար գումարեալ ժողովները բազում աղաւանդ խնդրած են իրենցմէ որ վան օգոստիս երկիրներուն իրենց պաշտօնը չձողուն չէրթան . ուստի այս առժամանակեայ որոշումը կայսերական կառավարութեան առջև կրգնեն խնարհաբար , որուն պիտի փութան հնազանդիլ , եթէ իւր առաջի հրամանը հաստատուն պահելու գէշ , քանզի բոլորով որտեւ կը ցանկան կրտն յիշեալ իշխանները , իրենց անձնանուէր զգացմունցը ապացոյցներ տալ օգոստոսիա Սուլթանին որ իրենց վեհապետ տէրն է :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ , 3 ՕԳՈՍՏՈՍԻ

Կայսերական հրովարտանքով հետեւեալ փութութիւնները ի գործ դրուեցան .

Սթրէթֆորտին հարկապահանջ Նէճիպ էֆէնտին՝ Լանկայի հարկապահանջ կարգեցաւ :

Գրապիզմի հարկապահանջ Հասան Թահսին էֆէնտին՝ նոյն պաշտօնի . Սանասթըր գնաց :

Կարգադրի հարկապահանջ Շէքիպ էֆէնտին՝ նոյն քաղաքին համարախալ անուանեցաւ :

Լիմոյսի կառավարութիւնը Կուրի պէյին յանձնուեցաւ , որ Սթրէթֆորտին թղթակցութեան գրատան անդամ և միանգամայն Սալիկ փաշային գործակալն (գաբուրէհիան) էր :

Սուրի տեղակալ (գայմագամ) Հապիպ էֆէնտին՝ Վեքիս տեղակալ կառավարիչ կարգեցաւ :

Ստիկանութեան ժողովոյն անդամ Վալուլապաշապէն թեմետոսի տեղակալ անուանեցաւ :

Կրկնգործութեան ժողովոյն անդամ Վահիտ պէյը՝ Կառահիսարի կառավարիչ կարգեցաւ :

« Բանի մը օրէ հետեւ Կոստանդնուպոլս կը գտնուի Սպանիացի զօրապետ Բրիմը որ Ռէտրի կամ է , և Սպանիոյ վեհապետ Թագուհւոյն կողմանէ յուղարկուած է Վալաքիա գիտնական պաշտօնի մը ընկերութեամբ քանի մը պաշտօնաւորաց : Այս երեւելի զօրապետը մեծ պատուով ընդունուեցաւ օսմանեան կառավարութեան անդամներէն և դեսպանաց խմբէն :

« Լաբուրի օրը Վեքիպ դեսպան լորտ Սթրէթֆորտ տը Ռէտրիֆը մեծ հացկերպ մը ըրաւ ի պատիւ յիշեալ զօրապետին , ուր ներկայ գլուխուեցան Գաղղիոյ և Սպանիոյ դեսպանները , Ֆուադ էֆէնտին , Բիւմիլ պէյը , լորտ Վեքիլա , զօրապետ Բրիմը ուղեկից պաշտօնակալները և այլն : Այս հացկերպը մասնաւոր ու մեծաշուք պարահանդէսով մը վերջացաւ :

« Կրկնգործի նաւատորմից երէկ հասաւ ի Կոստանդնուպոլս , և Սթրէթֆորտին առջև էին անցնելուն ողջունեց զնախաքաղաքը՝ 21 թնդանօթ արձակելով :

« Կրկնգործի շոգեհաւը Վեքիլ անուն անցեալ ամսոյ 30ին հասնելով Վեքսմարքիայէն՝ 800 զինուոր բերաւ հետը , Այլ ամսոյս 1ին շարժւեալ օրը երկու առագաստաւոր նաւ Վեքսմարքիայէն հասան , որոց մէջ 900 զինուոր կային :

ՉԻԼԵՆԻՆ 7 ՕԳՈՍՏՈՍԻ :

Լիմոյս 1ին շաբաթ օրը վանմախալ Շէքիպ էֆէնտին՝ Կառահիս անուն օսմանեան պաշտօնական շոգեհաւով մեկնեցաւ Կոստանդնուպոլս դաւանալու :

« Լոյն օրը քաղաքի կառավարութեան պաշտօնի ներկայութեան զինուորական և քաղաքական պաշտօնաւորաց , արհեստաւորաց գլխաւորներուն , հպատակ ժողովրդաց ազգային հոգաբարձուաց և բոլոր հիւպատոսարանաց առաջին թարգմաններուն մեծ հանգիսի կարգացուեցաւ թագաւորական հրովարտակը , որով վանմախալ Սանայիլ փաշային կը յանձնուի Սթրէթֆորտին նահանգին ընդհանուր կառավարութիւնը :

« Երեքշաբթի օրը յիշեալ վանմախալ բաւրեգութ փաշային հրամանաւ բոլոր հպատակ ազգաց հոգեւոր հովիւները և ազգային հոգաբարձուները հրաւիրուեցան կառավարութեան պալատը , ուր ներկայ էին նաեւ քաղաքական ժողովոյն անդամները , և հանգիսի կարգացուեցաւ Բարձրագոյն Դրան մարդասիրական յայտարարութիւն , զոր Լաբուրի 447 թերթին մէջ հրատարակած էմք :

« Լաբուրի վեհապետ Ֆուադիսիս Յովսէփ կայսեր ծննդեան տարեդարձը խիստ փառաւոր հանգիսի կատարեցաւ երէկ :

« Այսօր թուրքաի շոգեհաւով Կարպայէն հասած լուրերը կը հաստատեն , թէ Ռուսաց վեհապետ Կայսրը ընդունել է մեծ տէրութեանց կողմանէ եղած առաջարկութիւնը ի մասին բարեկամօրէն կարգադրութե Բարձրագոյն Դրան և Ռուսաց կառավարութեան մէջ եղած վէճին :

Մինչև ցայսօր 680 բեռի չափ չոր թուղ եւ կաւ և ըստ տեսակին ծախուեցաւ 130-170 ղուռուշի կենդինարը , իսկ այսօրուն գինը՝ 150էն 160 ղուռուշի է :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԴԱՆՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ

(Այս ժողովը արդէն գումարուած պիտի ըլլայ այժմ , և մեծ յոյս ունիմք թէ խաղաղասիրական որոշում մը ըրած ըլլայ պիտի :

